




AN INITIATIVE OF GEBERT RÜF STIFTUNG  
IN COOPERATION WITH THE UNIVERSITY OF FRIBOURG

## ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԱՆՁԱՏՈՒՄ, ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՎՁՈՒՄ: ԱՐԴՅՈՔ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԿ-ՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԱՆՀԱՆԳՍՏԱՆԱՆ

Համաձայն Թուրքիանյան հասարակական ուսումնասիրությունների կենտրոնի (ԹՀՈԻԿ) կողմից վերջերս իրականացված հետազոտության արդյունքների՝ հայկական հասարակական կազմակերպությունների (ՀԿ) դաշտը շարունակում է անջատված մնալ հասարակության լայն հատվածից: ՀԿ-ներին անդամակցության մակարդակը չափազանց ցածր է: Ցածր է նաև ՀԿ-ների հանդեպ վստահության աստիճանը, որը շարունակում է անկում ապրել: ՀԿ-ները կամ գերազնահատում են իրենց հանդեպ հասարակության վստահությունը կամ այն իրենց համար ոչ կարևոր գործոն են համարում: Մույն սեղմագրի նպատակն այս իրավիճակի հանդեպ ուշադրություն գրավելն է: Հասարակական անվստահության և ներգրավվածության բացակայությունը ՀԿ-ների գործունեության համար ոչ առողջ միջավայր է ստեղծում և նվազեցնում է դրանց գործունեության հնարավորությունները:

### ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԻՑ 20 ՏԱՐԻ ԱՆՑ. ԴԵՌԵՎՍ ՀԵՏԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ

2012-2014թթ. ԹՀՈԻԿ-ը իրականացրել է քաղաքացիական հասարակության վերաբերյալ հետազոտություն՝ երկրորդական տվյալների վերլուծության, հարցման և որակական մեթոդների կիրառմամբ: Հետազոտությունը ֆինանսավորվել է Կովկասի Ակադեմիական Շվեյցարական Ցանցի (ԿԱՇՑ) կողմից: Հետազոտությունը փաստում է Հայաստանում քաղաքացիական հասարակության հետևումունիստական «թուլության» մասին, ինչն արտահայտվում է մասնակցության ցածր մակարդակով և անվստահությամբ:




ՀԿ-ների հանդեպ վստահության մակարդակը Կովկասյան Բարոմետր, միջին արժեք 1-5 սանդղակ (որտեղ 5-ը լիովին վստահում էմ)

2011 թվականին բնակչության միայն 7%-ն էր ակտիվորեն ներգրավված եղել քաղաքացիական ՀԿ-ներում: Այս մտահոգիչ թիվը սկսել է նվազել 1997 թվականից, կազմելով այն ժամանակ 12%: ՀԿ-ների հանդեպ վստահությունը Հայաստանում պակասում է սկսած 2009 թվականից: Հասարակությունը ավելի քիչ է վստահում ՀԿ-ներին, քան տեղական ինքնակառավարման մարմիններին և լրատվությանը: Սակայն այսպիսի «թուլությունը» պայմանավորված է ինչպես անցյալով, այնպես էլ ներկայիս սոցիալական և քաղաքական խնդիրներով: Մարդկանց մեծամասնությունը հավատացած է, որ ՀԿ-ները սոցիալական խնդիրների վրա ոչ մի ազդեցություն չեն կարող ունենալ:

**ՀԿ-ՆԵՐԸ ԳԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ՀԱՆԴԵՊ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ**


Հարցման մասնակիցներին (ՀԿ-ների ղեկավարներին) խնդրված էր գնահատել ՀԿ-ների հանդեպ հասարակության վստահության աստիճանը՝ օգտագործելով Կովկասյան Բարոմետրի համապատասխան հարցումը: Հասարակության կարծիքի ուսումնասիրման արդյունքները վկայում են, որ ՀԿ-ները գերազնահատում են իրենց հանդեպ վստահությունը: Որակական հարցազրույցները բացահայտում են, որ ՀԿ-ների ղեկավարները համոզված են, որ իրենց ՀԿ-ները վստահված են, և միայն դա է կարևորը: Երբ ՀԿ-ների ղեկավարներին խնդրվում է ներկայացնել անվստահության պատճառները, նրանք նշում են կառավարությունը, երկրի սոցիալ-տնտեսական վիճակը և մարդկանց «մենթալիտետը»: Համաձայն ՀԿ-ների ղեկավարների՝ ինքնաքննադատությունն ամբողջովին բացակայում է:



**ՀԿ-ների հանդեպ վստահություն**  
**ՀԿ-ների գնահատականն ի հակադրություն հանրության կարծիքի, %**

**ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆ ԱՃՈՒՄ Է**

Այնուամենայնիվ, հարցումից ստացված ոչ բոլոր արդյունքներն են բացասական. Հայաստանն ունի տարածաշրջանում կամավորության ամենաբարձր մակարդակը, որը շարունակում է աճել: Կոպիտ հաշվարկով, Հայաստանի բնակչության մեկ երրորդը ներգրավված է կամավորական աշխատանքներում, և այս կամավորական աշխատանքների մոտավորապես կեսը իրականացվում է ՀԿ-ներից դուրս: Վերջին շրջանում կամավորության մակարդակի աճը հիմնականում պայմանավորված է ոչ ֆորմալ կամավորության թվի աճով, մեծամասամբ տղամարդկանց շրջանում:



**Մասնակիցների կողմից զեկուցված կամավորություն,**  
**Կովկասյան Բարոմետր, «Այո», %**

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ «ԲՈՒԺԻՉ ԼՈՒԾՈՒՄ»**

Որոշակի հարցի վրա կենտրոնացած քաղաքացիական ակտիվությունը կարծես թե զարգացում է ապրում Հայաստանում: Այն հիմնականում ինքնաբերական է, առաջնորդվում է երիտասարդների կողմից, հզորանում՝ սոցիալական լրատվամիջոցների օգնությամբ: ՀԿ-ների ղեկավարների և կամավորների հետ որակական հարցազրույցներից կարելի է եզրակացնել, որ քաղաքացիական ակտիվությունն ու «նոր երիտասարդ սերունդը» հույսի աղբյուր են հանդիսանում քաղաքացիական հասարակության գործիչների համար: Այդուհանդերձ, որպեսզի հայկական քաղաքացիական հասարակությունը կարողանա կրկին վերակենդանանալ և կապվել հասարակության ավելի լայն շերտերի հետ, հարկավոր է, որ այս նոր հոսանքները միավորվեն և խելացիորեն ուղղորդվեն:

ՀԿ-ները կարող են շահել քաղաքացիական ակտիվության զարգացումից, սակայն սա չի կարող ինքնաբերաբար լինել: Մեր առաջնային դիտարկումները ցույց են տալիս, որ «հին» ՀԿ-ների ոլորտի և «նոր» քաղաքացիական ակտիվության միջև գոյություն ունի ինչպես համագործակցություն, այնպես էլ լարվածություն:

## ԿԱՄՐՁԵԼՈՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊՐԱԿՏԻԿԱՆ

ԹՀՈՒԿ-ը մի նոր հետազոտական ծրագիր է սկսել, որը նույնպես ֆինանսավորվում է ԿԱՇՑ կողմից: Ծրագիրը նախատեսված է իրականացնել երկու տարվա ընթացքում՝ որպես հայկական քաղաքացիական հասարակության հետազոտության շարունակություն: Այն հիմնականում ուղղված է ՀԿ-ների և քաղաքացիական ակտիվիստների փոխհարաբերությունները և փոխադարձ ընկալումները բացահայտելու՝ տեղադրելով այս երկու խմբերին հայաստանյան քաղաքական մշակույթի և ան/վստահության ավելի լայն սպեկտրում: Չնայած նրան, որ հետազոտության նպատակն ակադեմիական/տեսական է, մենք վստահ ենք, որ այն կարող է նույնպես պրակտիկ նշանակություն ունենալ քաղաքացիական հասարակության տարբեր գործիչների համար: Սակայն, որպեսզի սա իրականանա, ավելի սերտ համագործակցություն է հարկավոր մասնակիցների հետ: Մենք հետաքրքրված կողմերի հետ կառուցողական երկխոսության ցանկություն ունենք, ինչը կնպաստի ուսումնասիրության արդյունավետությանը՝ ժամանակին ներառելով իր մեջ քաղաքականության համապատասխան ընկալումներն ու վերլուծությունը:

Հայկական քաղաքացիական հասարակության վերաբերյալ հետազոտության ամբողջական նյութը էլեկտրոնային տարբերակով հասանելի է ԹՀՈՒԿ-ի կայքէջում (<http://tcpa.aua.am/reports-and-publications/>). 2012-2014թթ. իրականացված կամ 2014-2016թթ. ընթացքի մեջ ուսումնասիրությունների մասին մանրամասն տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք դիմել մեզ:

### ***Թուրփանջյան հասարակական ուսումնասիրությունների կենտրոն***

Հայաստանի ամերիկյան համալսարան

ՀՀ, 0019, Մարշալ Բաղրամյան 40

Հեռ.՝ (+374-60) 61-25-80

Էլ-փոստ.՝ [tcpa@aua.am](mailto:tcpa@aua.am)

Կայք՝ <http://tcpa.aua.am/>

Բլոգ՝ <http://tcpablog.wordpress.com/>

### ***Հայաստանի քաղաքացիական հասարակության վերաբերյալ երկու ուսումնասիրությունների ղեկավար՝***

Դր. Եվգենյա Պատուրյան

Էլ-փոստ.՝ [ypaturyan@aua.am](mailto:ypaturyan@aua.am)

